ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2020 թվականի N: 23-Ա ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ԲԱԴԻՇՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ, 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի 2020 թվականի հունվարի 20-ի N AC-019-20 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինող, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բադիշյանին 2020 թվականի հունվարի 30-ից 31-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաք՝ «Բեսթ Վեստերն Փարադայս Հոթել Դիլիջան» հյուրանոցային համալիր՝ «Արամազդ. Սմարթ» ծրագրի շրջանակներում կայանալիք «Միջոլորտային համագործակցությունը համայնքի զարգացման գրավական» թեմայով «Բաց տարածք» ձևաչափով հանդիպմանը մասնակցելու նպատակով:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:
3. Կարեն Բադիշյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինողի պարտականությունների կատարումը վերապահել գլխավոր քարտուղարի տեղակալ Տիգրան Ղարիբյանին:

4. Կարեն Բադիշյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է